Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՅՈՒԼԻՍ 15 1893 ԹԻՒ 13

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան

Կ. Պոլիս, Յուլիս 8.— Տեարք Թումայեան և Գայաեան ներումն ստացած են Սուլթանէն պայմանաւ որ Թրքական հողէն հեռանան։ Վաղը ճամբայ կ'ելնեն դէպ ի Մարսիլիա։ Սուլթանն ծրի նաւատոմս և 15ական օսմ. ոսկի տուած է իւրաքանչիւրին։

*

* *

Ուրախ եմք որ կրնամք սկսիլ ներկայ թուով հրատարակել ԱԶԳ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ վերայ ուսումնասիրութիւններ ի գրչէ բանիշուն և իրազեկ ազգայնոց։ Թէ ԲԱԲԻԿ և ԽՈՌ ի՞նչ դրից կամ պաշտօնի ազգայինք են, կամ ո՞ր երկիրներէ կը գրեն, պարտաւոր եմք լռել։

*

* *

Մարզուանի հայ հասարակութիւնն առ անգլիական, գերմանական և ամերիկեան դեսպանս Կ. Պոլսոյ տեղեկագիր մէ ուղղած են յորում կը պատմէ տեղօքն ու թուականօք և յանուանէ թէ ինչ տանջանքներ կրած են հայ բանտարկեալք ի ձեռս թուրք պաշտօնէից։ 20 տեսակ տանջանք նկարագրուած են։

ՄԱՆՉԷՍԹԸՐ ԿԱՐՏԻՅԸՆԻ լեզուն մեծ պատիւ կը բերէ իրեն։ ԹԱՆի լեզուն վիրաւորիչ է մեզ ինչպէս և իւր պատուոյն որպէս ներկայ թուոյ մէջ պիտի տեսնեն ընթերցողք։

*

* *

Անգլօ-Հայկական ընկերութիւնն վստահելի հաւաստիք ստացած է թէ ռուսական կառավարութիւնն ի նկատ կ'առնու Էնկիւրիի դատապարտելոց վճիռն։ Փոքր Ասիոյ ռուսական հիւպատոսներէն տեղեկագրեր ուզուած են, և Զարին ծառայութեան մէջ գտնուող բարձրաղիր Հայոց ազդեցութիւնն ի գործ դրուած է Ս. Փեդերպուրկի դահլճին վերայ։ Պաշտօնական շրջանաց մէջ Թրքական Հայաստանի վիճակն շատ ծանր կը համարուի։ Ստոյգ կը համարուի թէ Զարն չպիտի ուզէ ուրիշ ոևէ տէրութեան հետ գործակցիլ, այլ պիտի միայնակ յիշեցունէ Դրան թէ Ս. Ստէֆանոյի 16դ յօդուածին մէջ երաշխիք տրուած էին Սուլթանի կողմանէ ի նպաստ Փոքր Ասիոյ քրիստոնէից։ Ի Ս. Փեդերպուրկ կը կարծեն թէ Անգլիոյ և Ամերիկայի կառավարութիւնք հայ բանտարկելոց նըկատմամբ զաղջ են, հակառակ պաշտօնական յայտարարութեանց։— 28 Յունիս։

ՀԱՅԿ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրայ համար երկու տոլար կամ 10 ֆրանք

Կանխիկ

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նամակ Յերուսաղէմէ.— Հայոց Խնդիրը. Ազգային Քաղաքականութիւն (Բարկայ).—Արտաքին Քաղաքականութիւն Հայոց (Խոռոյ).— Անգլիական Մանչէսթրը Կարտիյրն թերթն Հայոց Խնդրոյն մասին.— Անգլիական Խորհրդարանն և Հայ Դատապարտեալք.— Թան և Հայ Դատապարտեալք.— Ամերիկայի Հ.այերն. Ապօրինի գործեր.— Քաղաքական, Ազգային և զանազան լուրեր։

Կը խնդրեմք որ մընի օրտրրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E՝(Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուներլու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

ՆԱՄԱԿ ՅԵՐՈՒՍԱՂԷՄԷ

Երուսաղէմ, 17 Յունիս, 1893

Վեհ. Հայրապետին անունն ի Ս. պատարագի յիշատակութիւնն սկսաւ յերուսաղէմ և թեմօրէս նորա։ Թէ երբ պիտի մեկնի ասկէց՝ դեռ որոշապէս յայտնի չէ։ Այլ ևս օսմ. հպատակ չէ, ռուստհպատակ է նա անցեալ հինգշաբթի օրէն ի վեր, յորում Պալսոյ ռուսական դեսպանէն հեռադիր հասաւ հոս ռուսական հիւպատոսին որ պաշտօնապէս յայց դալով ամենայն Հայոց Հայրապետին ծանոյց կայսեր իրատէն, միանգամայն յայտնեց թէ Եւրոպայի ճանապարհաւ պիտի գնայ ի Ս. Էջմիածին, առանց կ. պոլիս հանդիպելու։ Հոպպէ, Թրիէսթ, Վիէննա, Օտեսա, Պաթում, Տփղիս, Էջմիածին— այդ է ուղեգիծն։ Հայրիկ կը պնդէ թէ մինչև որ Ս. Էջմիածնի և ռուս տէրութեան հրաւիրակներն չգան ի Ս. Երուսաղէմ չեմ կարող ճամբայ ելնել։ Օսմանեան կառավարութեան կողմէ մինչև հիմա տրուած ամսաթօշակներն (25 օսմ. ոսկի) վճարուեցան ց15 Մայիս ամսոյ։ Անկից ի վեր ջնջուած է թոշակն։ Ինքն անձնապէս տկար է. փոքր բանէ մը կը յուզուի. օդոյ ամեն դոյզն խառնակութենէ կ'ապրուի առողջութիւնն։ Միտք ունի Բեղլէհէմ օդափոխութեան ելնելու մի քանի ուրբաթ համար.

* * *

*

* *

Յուլիս 13ին կը հեռագրեն կ. Պոլսէն.— Անգլիական դեսպանատունն լուր հասաւ թէ 300 ոստիկան և պաշի-պոզուք կեսարիայէն յղուած են Էվէրէկ իբր թէ փախստականներ ձերբակալելու համար։ Բոլոր Հայոց տուներն կոխեցին և պղծեցին կիներն։ Հայերն թուով յոյժ անբաւական էին ազդու դիմադրութիւն անել պարենալու համար։

Գ. Ուսումնասիրութիւն
Ազգային Քաղաքականութեան

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԲԱԲԿԱՅ

Ա

Պէրլինի դաշնագրին անորոշ բառերով Հայաբնակ գաւառաց, կամ յատուկ լեզուաւ Հայաստանի, Հայոց խնդիրը չէ նոր խնդիր: Ապրելու աճելու և զարգանալու յօժար, արժանի և կարող ամեն ժողովուրդ որմէ զլացուած են տարրական իրաւունք մարդկութեան ունեցած է Հայոց խնդիրէն ոչ շատ տարբեր խնդիր, եւ պատմութիւնն, մանաւանդ վերջին ժամանակաց պատմութիւնն, կը ցուցանէ թէ որն է միակ և լաւագոյն եղանակն լուծելու այսպիսի խնդիրներ: Այս դարուս սկիզբէն ի վեր Թուրք կառավարութիւնն ինքն խոստովանած է, և եւրոպական տէրութիւնք բազում առիթներով յայտարարած են թէ Օսմանեան պետութեան հպատակ Քրիստոնեայ ժողովրդոց վիճակն հիմնական դարմանի պէտք ունի, և առանց այս դարմանին ոչ միայն այն ժողովրդոց այլ և պետութեան գոյութիւնն մեծ վըտանգի մէջ է: Յաճախ կրկնուած է, եւ մեծ ճշմարտութեամբ, թէ Օսմանցիք արշաւանօք եկած տիրած են երկիրներուն որ անոնց ձեռքը կը գտնուին, և իբրեւ յաղթող բանակներ մնացած են այն երկիրներուն մէջ առանց ունենալու յարմարութիւններն և առանց լեցունելու պայմաններն որովք յաղթող և յաղթեալ ժողովուրդներ կը հաշտուին իրարու հետ, և կը կազմեն օրինաւոր քաղաքական մարմին: Թրքաց իշխանութեան ներքեւ գտնուած են միշտ երկու կարգի ժողովուրդներ, յաղթող ժողովուրդ և պարտեալ ցեղեր: Պարտեալ ցեղերու իրաւունքներն ոտնակոխ եղած են ինչպէս պատերազմի նոյնպէս և խաղաղութեան ատեն, և անոնց թոյլ տրուած է միայն ապրել իբրեւ ստրուկ և գերի, միշտ նշաւակ քաղաքային և ընկերական զրկանաց: Յոռեգոյնն այն է որ տիրող ցեղն պարտեալ և գերութեան ներքեւ ճնշուած ցեղերէ շատ ստորին է քաղաքային և ընկերական առաքինութիւններու կողմանէ, և Թուրք կառավարութիւնն կարող եղած չէ ըմբռնել այդ ցեղերու ընկերական և քաղաքային պէտքերը: Այսպէս Թուրք կառավարութեան ծանր լծոյն տակ ինկած քրիստոնեայ ժողովրդոց բախտն եղած են դարաւոր մարտիրոսութիւն և վատթարագոյնն գերութեանց: Թուրքը չէ եղած վաճառական, երկրագործ և արհեստաւոր, բայց իբրեւ հողի տէր, իբրեւ իշխող երկար ժամանակ կարող եղած է վարել շռայլ և զեղխ կեանք ի գին աշխատաւոր ժողովրդոց արեան և քրտանց, մինչև որ ցամքեցուցած է հարստութեան ամեն աղբիւր և բեկած ամեն ջիղ և զօրութիւն: Գերութեան աղէտից սովորած և անմռունչ հնազանդութեան դատապարտուած ժողովուրդներու խեղճ վիճակին մէջ կը սկսին փոփոխութիւնք այս դարուս սկիզբէն: Մինչ ընդհանուր կը հռչակուէին յԵւրոպա և յԱմերիկա տարրական իրաւունք մարդկութեան · իրաւունք և արտօնութիւնք քաղաքացութեան, ի Թուրքիա կ'աւելնային հալածանք և քրիստոնէից վիճակն անտանելի և ահաւոր կը լինէր: Երբ Օսմանցւոց վայրագ զօրութիւնն տեղի կուտար Արեւմտեան ազգաց կարգաց, կանոնաց և զինուց գերազանցութեան, և Թուրք պետութեան անկումն կը սկսէր, արտաքին պատերազմներու մէջ անյաջողութիւնն կը դրդէր զԹուրքն աւելի խստութեամբ մղել ներքին պատերազմն ընդդէմ քրիստոնէից, որոյ կրօնակից տէրութեանց հզօր բանակներու առջեւէն կորագլուխ խոյս կուտային, այլ եւս մահմետականք ոչ միայն իբրեւ գերի կը նեղէին զքրիստոնեայս, այլ և կ'ատէին զանոնք իբրեւ թշնամի: Թուրքիոյ մէջ քրիստոնէից կոտորածներու դէպքեր սոսկմամբ կը լեցունէին զԵւրոպա: Աստուածային և մարդկային ամեն օրէնք իրաւունք կուտային քրիստոնեայ ժողովրդոց իրենց կեանքը և գոյութիւնը պաշտպանելու համար նոր միջոցներ խորհիլ և հնարել: Սոյն ատեն սկսան խնդիրք Սերպիացւոց և Յունաց: Միացեալ Նահանգաց անկախութեան յայտարարութեան անմահ խօսքերու արձագանքն էր կարծես որ կը լսուէր Պալքանեան և Պեղոպոնէսի թերակղզիներուն մէջ. «մենք կ'ընդունինք ինքնայայտ ճշմարտութիւն թէ մարդիկ ստեղծուած են հաւասար, թէ իրենց Արարչէն օժտուած են ինչ ինչ անկապտելի իրաւունքներով, թէ այս իրաւանց մէջ են կեանք, ազատութիւն և ձգտումն յեր-

ջանկութիւն, և թէ այս իրաւունքներն ապահովելու համար հաստատուած են ի մարդիկ կառավարութիւններ որ իրենց արդար իշխանութիւնը և զօրութիւնը կը ստանան կառավարելոց հաւանութենէն, և երբ որևիցէ կառավարութիւն կը լինի եղծիչ և խանգարիչ այս հպատակաց, ժողովրդեան իրաւունքն է փոխել զայն կամ ջնջել։» «Երբ երկար շարք մի յափշտակութեանց և գեղծմանց կ'ապացուցանէ թէ կառավարութեան մը նպատակն է ժողովուրդը բացարձակ բռնապետութեան ներքեւ պահել, ժողովրդեան իրաւունքն է, ժողովրդեան պարտքն է ի բաց թօթափել այնպիսի կառավարութիւն և իրեն ապագայ ապահովութեան համար նոր երաշխաւորութիւններ հայթայթել։» Այսպէս իրենց պատուոյ և կենաց ապահովութեան համար երաշխաւորութիւններ հայթայթելու մտօք ուք ելան նախ Սերպք և ապա Ելլադայի Յոյնք, հեղեղի պէս հոսեցաւ արիւն, և մահու ու կենաց կռիւն տարիներ տեւեց։ Ի սկզբան արդար իրաւանց ձայնը կը թուէր անլսելի, Թուրքերն իրենց վայրագութիւնն ի ծայր հասուցին մանաւանդ Յունաստանի մէջ։ բայց վերջապէս արդարութիւնն եղաւ յաղթական, և Եւրոպայի հզօր միջամտութեամբ Սերպք ինքնօրէն իշխանութիւն և Յոյնք անկախութիւն ստացան։ Եւրոպա բաւական պարզամիտ դտնուեցաւ Յունաստանի անկախութենէն ետքը հաւատալու թէ Թուրքերն խելք ունէին խրատ առնլու փորձէն և բարեկարգելու կառավարութիւնն և կարգ ու կանոն հաստատելու իրենց երկրին մէջ։ Խորհողներ եղան թէ Եէնիչէրիների բարձմամբ նոր դարագլուխ կը բացուէր Թուրքիոյ համար, և Թանզիմաթի հաստատութեամբ կենդանութեան նոր նշաններ կ'երևէին։ Եէնիչէրիներ ջնջուեցան, Թանզիմաթ հրատարակուեցաւ, Թուրքիա Եւրոպական մեծ տէրութեանց կարգը դասուեցաւ, պայմանաւ որ իբրեւ Եւրոպական տէրութեանց օրէնքով և արդարութեամբ կառավարէր զերկիրն, կիւլհանէի «Խաթթը Շերիֆն» հրատարակուեցաւ մեծ հանդիսիւ, և մահմետական ու ոչ-մահմետական հպատակաց հաւասար իրաւունք և արտօնութիւնք խոստացուեցան, Թուղթի վրայ գրուեցան զեղեցիկ օրէնքներ, որոյ դօրութիւն տալու առաքինութիւն և ոյժ կը պակսէին Թրքաց բարուց մէջ, և քրիստոնեայ հպատակաց վիճակն չկրեց մեծ փոփոխութիւն։ Վարչական, օրինական և ելեւմտական գեղծումնք շարունակեցին որպէս յառաջ, և մահմետականաց ու ոչ-մահմետականաց մէջտեղ ցեղային և կրօնային ատելութիւն մնաց մխրճի տակ ծածկուած կայծի պէս, և ամեն անգամ որ մոլեռանդութեան և կրից հովեր կը շնչէին, կը բռնկէր կ'ըլլար հրդեհ լափող։ Խրիմու պատերազմի ատեն Եւրոպայի ամենէն քաղաքակրթեալ երկու ազգեր իրենց ժողովրդոց պատուական արիւնն և առատ գանձերը տուին ի պահպանութիւն Թուրք կառավարութեան, և խոստումն տուին Խաթթի հիւմայուններով քրիստոնէից վիճակը բարւոքելու, դարաւոր հարստահարութեանց և կեղեքմանց վախճան տալու։ Ոչ միայն պատերազմի ատեն այլ եւ պատերազմէն ետքը Եւրոպա միլիոններ փոխ տուաւ Թուրքիոյ խոստացեալ բարեկարգութեանց գործադրութեան համար, բայց խաղաղութեան երկար տարիներ ապարդիւն անցան։ Եւրոպական տէրութեանց կողմանէ բարեկամական խորհուրդներ, հրահանգներ, հաւաքական ծրագրեր, հարստահարութեանց քննիչ յանձնախմբեր, բարեկարգութեանց յանձնաժողովներ, պաշտօնէից արագ արագ փոփոխութիւններ, ամենքն ցուցին թէ Եւրոպական են ջանքերն Թրքաց միջոցաւ և Թրքաց կամաք միայն բարեկարգելու զԹուրքիա։ Երկար տարիներու փորձերով հաստատուած էր արդէն թէ Թուրքիոյ մէջ լաւագոյն դիտաւորութիւններ առանց նշանակութեան են, թէ ամենէն հարկաւոր բարեկարգութիւններ չէին յաջողեր գաղանի և անյաղթելի դիմադրութեանց պատճառաւ։ Ինչպէս ըսած էր Թուրքիոյ գործոց քաջ հմուտ նշանաւոր պետական անձ մը, հնար չէր ուրիշ միջոցաւ ամրացունել ու զօրացունել օսմանեան պետութիւնն, բայց միայն ինքնօրէն իշխանութիւն տալով քրիստոնեայ ցեղերու որ յառաջադիմութեան ու զարգացման ամեն ձիրք ու կարողութիւն ունէին։

Խրիմու պատերազմէն ետքը Թուրք կառավարութիւնն ամեն պատճառ և շարժառիթ ունէր, եթէ կարող էր, քրիստոնէից դարաւոր հարստահարութեանց վերջ տալու։ Ամեն վտանգ եւ երկիւղ կային իրաց անտանելի վիճակին շարունակութեան

մէջ. բայց ի՞նչ ըրաւ Թուրք կառավարութիւնն, եւ ոչ մի հիմնական քայլ առաւ։ Դամասկոսի դէպքն, Կրետէի ապստամբութիւնք, Հէրսէք-Պոսնայի խռովութիւնք եւ Պուլկարկոյ ջարդեր հետեւանք էին անիրաւ եւ անմիտ քաղաքականութեան որ կը գրգռէր զմահմետականս եւ ի յուսահատութիւն կը մղէր զքրիստոնեայս։ Փոխանակ մէջտեղէն վերցուելու գանգատանաց պատճառներ, դժգոհութիւն յայտնել կը համարէր եւ կը համարի տակաւին ոճիր, փոխանակ հանդարտութեամբ բուժելու ժողովրդեան կողերուն վրայ բացուած խորին վէրքերն, բռնական միջոցներով աւելի կը զայրացուներ զանոնք, մինչեւ որ բերաւ երկրին վրայ Ռուսական պատերազմն։ Մինչ խաղաղութեան ատեն մի քանի առանձնաշնորհութիւններ եւ չափաւոր ազատութիւն կը զլանար Հէրսէք-Պոսնիոյ ու Պուլկարիոյ, պատերազմէն յետոյ բոլորովին կորոյս մին եւ ստիպուեցաւ ինքնօրէն իշխանութիւն տալ միւսոյն։ Թուրքերը կը յարգեն զանոնք միայն որ ունին միջոցներ իրենց վնաս հասցուներու։ Սերպիոյ, Իլլատայի, Հէրսէք-Պոսնիայի եւ Պուլկարիոյ խնդիրները հետզհետէ եւ ի դէպ ժամանակի լուծուեցան կարգաւ և եղանակաւ որ յարմարագոյն էր իւրաքանչիւրին։ Հայաստանի հարստահարութեանց խնդիրն եթէ ոչ հնագոյն քան վերոյիշեալ երկիրներու խնդիրներն գէթ անոնց չափ հին էր, եւայն խնդիրներուն չափ ստիպողական։

Ռուսիա Սան-Սթէֆանոյի դաշնադրութեամբ, Եւրոպական տէրութիւնք Պէրլինի դաշնագրութեամբ և Անգլիա առանձինն Կիպրոսի պայմանագրութեամբ ճանչցած և ընդունած են թէ կայ Հայոց խնդիր մը։ Բ. Դուռն իւր իսկ ստորագրութեամբ խոստովանած է թէ կայ հարստահարութեանց խնդիր Հայաստանի մէջ։ Բայց ինչ՞ ըրած է 15 տարիէ ի վեր այդ խնդիր լուծելու համար։ Դաշնագրոց ստորագրութենէն ետքն Հայաստանի վիճակն անտանելի կերպով վատթարացած է։ Ներկայ Սուլթանի կրօնամոլ և յետադէմ միապետութիւնն եղած է ստուգիւ ուրացումն ամենայն յուսոյ և խոստմանց բարեկարգութեան։ Սուլթանն իւր մահմետական հպատակաց կրօնամոլութեան մէջ կը խնդրէ աշխարհային իշխանութեան ապահովութիւն։ Սըր Հէնրի Լէյարտ, երբեմն Անգլիական դեսպան ի Կ. Պոլիս, 1880 Յունիս 4 թուականաւ պաշտօնագրի մը մէջ, զոր ուղղած էր առ լորտ Կրանվիլ, այն ատեն արտաքին գործոց պաշտոնեայ Անգղիոյ, այսպէս կը խօսի Թուրքիոյ վերայ, «Երբէք, թերեւս երբէք այս ընդարձակ կայսրութիւնն եղած չէր այսպէս անկարգ և անկազմ, երբէք անոր վիճակն եղած չէր այսչափ տագնապալից որչափ է այսօր։ Ամեն անաչառ և խոհուն Թուրք կ'ընդունի զայս։ Աշխարհի ուրիշ որևիցէ երկրի մէջ, անիրաւութիւն, վարչական զեղծմունք և թշուառութիւն որ կը տիրեն հոս, կը գրգռէին ժողովուրդներն ոտքի ելնել։ Եթէ ասոնք ոտքի ելած չեն և չեն ելներ, զայս կարելի է վերագրել յետին աստիճանի համբերութեան և այն դժուարութեան որ կայ այս երկրին ժողովրդոց այլ և այլ մասերը միացնելու ընդդէմ կառավարութեան, վասնզի կրօնական ատելութեան և ցեղի տարբերութեան պատճառաւ այլ և այլ ժողովուրդներ իրարմէ զատ են և նախանձով կը նային իրարու, բայց կան նշաններ որք կը ցուցնեն թէ իրաց ներկայ վիճակն չկրնար երկար տեւել։ ...Ասիական նահանգաց համար յառաջադրուած բարեկարգութիւններէն և ոչ մին գործադրուած է անկեղծութեամբ։ ... Դիւանագիտութեան ամեն միջոցներն և հնարները սպառեցի, սպառնալիք անդամ զանց չըրի Սուլթանին և անոր խորհրդականաց մտքին մէջ արթնցնելու վտանգն որ կը սպառնայ այս կայսրութեան, բայց ի զուր» Ինչ՞ պիտի գրէր արդեօք Սըր Հէնրի Լէյարտ եթէ այժմ ըլլար ի Կ. Պոլիս և մօտէն տեսնէր Հայոց վիճակը։

Հայեր դարերէ ի վեր խոնարհ աղերսանքէ և թախանձանքէ զատ ուրիշ միջոցի դիմած չէին։ Հարիւրներով հազարներով տուած էին աղերսագրեր, ի ծունր իջած էին Սուլթաններու գահոյից առջեւ յանձին իրենց պատրիարքաց, աղաչած էին և ոչ թէ իրաւունք այլ գթութիւն հայցած էին։ Բայց Հայոց պաղատանաց արհամարհանք և Հայոց լացերուն հեգնական ծաղր եղած էին պատասխան։ Երբ Հայք ստիպուեցան բողոք ընել և իրաւունք պահանջել, անոնց այս համարձակութիւն բանտով և աքսորով պատժուելու արժանի ոճիր համարուեցաւ։ Արդա-

բեւ ուր անիրաւութիւն կը տիրէ, հոն մեծագոյն ոճիր է անիրաւութեան դէմ բողոքելն։ Երբ Բ. Դուռն ոճիր նկատեց Հայոց բողոքներն ալ եւ անոնց հետ վարուեցաւ իրրեւ ապստամբներու հետ, բնական էր որ ապստամբական միտումն արթննար Հայոց մէջ։ Այսպէս Թուրք կառավարութիւնն իւր հպատակ ժողովրդոց ամենէն հաւատարիմը յուսահատական միջոցներու կը մղէ և այսպէսով կ'ապացուցանէ թէ անցեալն դառն փորձերէն սխալ դաս առած է, և թէ կարելի չէ Թուրքիոյ հպատակ քրիստոնէից վիճակը բարւոքել Թուրք կառավարութեան բարի կամաց և Թուրք պաշտօնեայներու միայն միջոցաւ։ Հայոց խնդիրն պարզապէս հարստահարութեանց խնդիր էր, բայց այժմ բոլորովին տարբեր և ծանր կերպարանք առած է չնորհիւ Բ. Դրան որ լիովին ապացոյց թէ Հայոց վիճակը կարելի է բարւոքել ոչ ի ձեռն այլ հակառակ կամաց Թուրք կառավարութեան։ Հայեր բարեկարգութեանց ի զուր սպասելէ ետքը այլ ևս չեն ուզեր ոուտ յոյսերով սրորուիլ, այլ որոշապէս կը պահանջեն որ տրուի իրենց ոչ միայն ապահովութիւն ընչից, պատուոյ և կենաց այլ և իրաւունք վարելու իրենց երկրին ներքին գործերը, իրաւունք ունենալու իրենց արդար բաժինը Հայաստանի գործադիր, օրէնսդիր, զինուորական և ոստիկանական վարչութեան մէջ։ Հայոց բոլոր պահանջներն պարզութեամբ և յստակութեամբ բացատրուած են այն յիշատակագրին մէջ զոր երջանկայիշատակ Ներսէս Պատրիարք Հայ պատգամաւորաց միջոցաւ մատուցած է Պերլինի վեհաժողովին։

Հայք ունին այն ամեն իրաւունք որովք որեւիցէ ժողովուրդ ցարդ ձեռք բերած է ինքնօրէն վարչութիւն։

(1)· Երկիրն որուն համար ինքնօրէն վարչութիւն կը պահանջեն՝ է երկիր Հայոց դարերէ ի վեր։ Պատմութեան մէջ այն երկիրը կը ճանչցուի Հայաստան անուամբ· եւ որչափ ալ աշխատի Թուրք կառավարութիւնն վերցուցնել Հայաստան անունն աշխարհացոյց տախտակներէ, հին պատմութիւններէ, նոյն իսկ բառարաններէ և կրօնական գրքերէ, աշխարհ պիտի շարունակէ ճանչնալ երկիրը իւր վաղեմի անուամբ։ Եթէ հայրենիք ունին նշանակութիւն և կուտան ժողովրդոց իրաւունք, Հայք հայրենեաց նուիրական իրաւամբ կը պահանջեն Հայաստանի համար ինքնօրէն վարչութիւն։

(2)· Հայք Հայաստանի հաստատուն բնակչաց մէջ են միակ ցեղ որ միւս ցեղերու վրայ մեծամասնութիւն ունին, և մեծամասնութեան իրաւամբ կը պահանջեն ինքնօրէն վարչութիւն։ Թուրք կառավարութիւնն չինծու. ադգահամարներով ջանացած է Հայոց մեծամասնութիւն ուրանալ, մանաւանդ Հայոց հետ դրացի և երկրին հաստատուն բնակիչ համարելով վաչկատուն և թափառական քիւրդ ցեղերն և նոյն իսկ վրանաբնակ Արաբներն որ տարուոյն մէջ քանի մ'ամիս միայն կուգան բնակիլ Հայաստան։ Բայց ենթադրելով իսկ թէ այն թափառական ցեղերն հաստատեն իրենց բնակութիւնն Հայաստանի մէջ, տակաւին մեծամասնութիւնը կը մընայ Հայոց քով, վասն զի ուրիշ ոչ մի ցեղ առանձինն Հայոց չափ բազմաթիւ է, և ուղիղչէ մահմետական տարբեր ցեղերը մէկտեղ հաշուել Հայոց դէմ, զի խնդիրը լոկ կրօնքի խնդիր չէ այլ և ցեղի խնդիր։

(3)· Հայք իրենց պատմութեամբ, լեզուաւ, գրականութեամբ, գիտութեանց և արուեստից ընդունակութեամբ, ընկերական եւ բարոյական առաքինութիւններով եւ վաճառականութեամբ անհամեմատ կերպով գերազանց են քան զդրացիս, եւ իրաւամբ այս գերազանցութեան կը պահանջեն ինքնօրէն վարչութիւն։ Ոչ ոք կրնայ ուրանալ թէ Հայաստանի հողը մեծաւ մասամբ կը մշակեն Հայք, թէ բոլոր արուեստներն ու արհեստները ծաղկած են Հայոց ձեռօք եւ վաճառականութիւնն Հայոց սեփական եղած է։ Դրացի ցեղերու մէջ Քիւրդեր եւ Չէրքէզներ կէս վայրենի են, եւ ոչ թէ գրականութիւն, այլ եւ գրաւոր լեզու չունին։

(4)· Հայք յանուն մարդկային իրաւանց կը պահանջեն ինքնօրէն վարչութիւն, վասն զի Թուրք կառաւարութիւնն ոչ միայն յարգած չէ օրինաց առջեւ հաւասարութեան սկզբունքն այլ եւ կարող չէ ըմբռնել եւ ի գործ դնել այդ սկզբունք։

(Շարունակելի)

ԲԱԲԻԿ

(Դ. ուսումնասիրութիւն
Ազգային Քաղաքականութեան)

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԽՈՌՈՑ

Ձեր «Ազգային Քաղաքականութիւն» խորագոյն խոկմանցս առարկայ եղաւ և ահա կուգամ ձեր լուրջ թերթի միջոցաւ պարզել իմ տեսութիւն Արտաքին Քաղաքականութեան մասին, վերապահելով ապագայ պատեհութեան գրել ներքին քաղաքականութեան եւս մասին։

Արտաքին Քաղաքականութիւն մի կայ մեզ համար, և այնքան փափուկ և կարեւոր որքան ներքինն։ Արտաքին Քաղաքականութեան նպատակն է պատրաստել և ի գործ չարժել օտար տէրութեանց օգնութիւնն ի նպաստ մեր դատին։ Ներկայ պարագայից մէջ այն է իմաստնագոյն վիճակ քաղաքականութեան որ ա՛յնքան բազմաթիւ տէրութիւններ համակիր և թեր կը կացուցանէ մեզ որքան հնար է։

Ըստ այսմ սկզբան դատելով մեք արտաքին քաղաքականութեան մէջ շատ թերի գտնուած ենք։ Այսօր միայն Անգլիա հոգ ունի կամ կը ցուցնէ մեր դատին համար, իսկ Գերմանիա, Ֆռանսա, Աւստրիա, Իտալիա և Ռուսիա անտարբեր են, գրեթէ անհամակիր։

Մեր մեծագոյն սխալն եղած է զՌուսիա պաղեցուցնել մենէ։ Այդ ահագին կայսրութիւնն, այդ հիւսիսային հսկայն. որոյ բարեկամութիւնն ու նիզակակցութիւն բաղձալի է տէրութեանց հզօրագունիցն, և որոյ ապագայ զօրութեան երեւակայութիւնն այժմէն սարսուռ ընթանալ կուտայ արևմտեան ազգաց յոտից ցգլուխ, ի՞նչպէս կրնամք մեք չխնդրել ու ձեռք բերելու չջանալ ամենայն հոգով։

Ո՞չ ապաքէն Ռուսիա միայն է բոլոր քրիստոնեայ պետութիւններուն մէջ մեզ սահմանակից, և մեր ազգին իբր մէկ երրորդին տէրն ու իշխանն։

Ո՞չ ապաքէն այդ Ռուսիայ է որ դարերէ ի վեր Օսմանցւոց թշնամի է և սոցա լծէն քրիստոնեայ հասարակութեանց ազատութեանն հզօր գործիչ եղած է։

Այս դիտողութիւններն կ'անեմ առանց մոռնալու թէ Ռուսիա Ցունաց և Պուլկարաց համակրելու աւելի կրօնային, ցեղային և քաղաքական չարժառիթներ ունէր քան մեզ։ Բայց միթէ ոևէ պատճառ կա՞յ ենթադրելու թէ Ռուսիա թշնամի լինի մեզ, և ոևէ տեսակ հայկական ինքնօրինութեան գաղափարին հակառակորդ։ Ընդունելով հանդերձ թէ Ռուսիա կը ձգտի ամեն արգելք առ ոտն կոխելով հասնիլ ի Միջերկրական անդր, կրնա՞մք ասել թէ Հայաստանի, Կիլիկիոյ կամ Փոքր Ասիոյ մէջ չկայ մաս մի ուր Հայոց կեդրոնացումն և ինքնօրէն վարչութիւնն անմիտանական լինի ռուսական ծրագրաց հետ։ Իմ կերծեօք չատ հաւանական կ'երեւի թէ վերջապէս Օսմանեան ընդարձակ կայսրութեան բաշխումն տեղի պիտի ունենայ ցեղային և պատմական բաժանմանց համաձայն— Սիւրիա, Արաբիա, Հայաստան, Կիլիկիա, Փոքր Ասիա են պիտի լինին առանձինն նահանգներ, ինքնօրէն, ամեն մէկն մէյ մէկ եւրոպեան մեծ պետութեան թեւարկութեան կամ վեհապետութեան տակ։ Այդ նոր քաղաքական կազմակերպութիւններէն որոնք որ փորձով ցուցնեն թէ քաղաքական զարգացման ու կեանքի ընդունակ են, պիտի մեծնան, իսկ որոնք որ անընդունակ լինին, պիտի ընկղմին։

Թէ՛ առանձինն զՀայոց խնդիրն կարգադրելու ձեռնարկն պետութիւնք թէ արևելեան մեծ խնդրոյն ուրիշ ճիւղերուն հետ միանգամայն, թէ՛ խաղաղութեան ատեն թէ պատերազմէ յետոյ, բնաւ հաւանական չերևիր որ Ռուսիա նուազ ծանրակշիռ ազդեցութիւն ունենայ քան ուրիշ ոևէ տէրութիւն, և ոչ ալ բանաւոր է ենթադրել թէ Անգլիա կամ այլ տէրութիւն ի հեճուկս Ռուսիոյ գոհացումտայ Հայոց ինքնօրինութեան պահանջին։ Ռուսիոյ ոյժն և դիրքն այնպէս են որ գրեթէ անհնար է պատերազմի մէջ չարաչարյաղթել նմա և անոր ազդեցութիւն սակարացունել ա՛յնպէս որ մեծ կարեւորութիւն չունենայ։ Ուրեմն մեզ հարկ է Ռուսիոյ համակրութիւնն չկորուսանել։

Ցաւալի է սակայն որ այդ պատուա-

կան համակրութիւն մեծ չափով չեմք վայելեր այժմ։ Յորմէ յետէ Անգլիա Սան Սթէֆանոյի 16դ յօդուածոյն տեղ Պէրլինեանին 61դ յօդուածն դնել տուաւ և Սուլթանին քրիստոնեայ հպատակաց պաշպանութիւնն Կիպրոսի դաշնագրով ինքն մասնաւորապէս ստանձնեց, Ռուսիա ցուելով կացք մի առաւ որ կրնայ թարգմանուիլ սա իմաստիւ— Ես պատերազմեցայ և արիւն թափեցի քրիստոնէից ազատութեան համար և ահա Անգլիոյ կը յանձնուի քրիստոնէից պաշտպանութիւնն։ լաւ, ես չպիտի միջամտեմ, և պարզ հանդիսատես պիտի լինիմ Անգլիոյ պաշտպանողական միջոցներուն գործադրութեան։

Ֆռանսա ևս Հայոց խնդրոյն անհամակիր և Սուլթանին հաճելի կ'երևի նախ վասն զի Ռուսիոյ ընթացքին համակերպիլ կ'ուզէ այդ խնդրոյ մէջ ուր մասնաւոր շահ չունի, և երկրորդ վասն զի կուզէ որ Անգլիա կարող չլինի իւր յանձնառութիւն կատարել դէպ ի քրիստոնեայ ժողովուրդս Թուրքիոյ և այսպէս կորուսանէ իւր ազդեցութիւն յԱրեւելս։

Ռուսիոյ այդ կացքն քաջ հասկացուած է նաև Դրան կողմանէ, և այն անհաւատալի խստութիւնն և անօրինակ համարձակութիւնն որով Թուրք կառավարութիւնն կը ջախջախէ իւր հպատակ Հայերն, ճիշդ այդ հասկացողութենէ յառաջ կուգան։ Թուրքն բնաւ, բնա՛ւ չպիտի ժպրհէր այնքան դաշնագրական յանձնառութիւններէ յետոյ այսպէս չարչարել Հայերն եթէ Ռուսիա լինէր Հայոց պաշտպանն։ Եւ այսօր իսկ եթէ Զարն միանգամ իւր յօնք պռստէ և ասէ Սուլթանին— Զպիտի՛ նեղես Հայերն, իսկոյն փատիշահին ընթացքն կը փոխուի։ Պէտք է գիտնալ թէ Թուրքիոյ համար տէրութեանց քան զամենայն ահարկուն Ռուսիա է։ և եթէ Սուլթաններն այս դարուս մէջ այնքան ունկն և յարգ մատուցած են կամ մատուցանել կեղծած են Անգլիոյ, պատճառն այն իսկ է որ Ռուսիոյ երեսէն յոյժ կը սարսափին և ստիպուած են Անգլիոյ նեցուկին կռթնիլ Զարին երեսն նայիլ համարձակելու համար։

Տէրութեանց առ իրեարս կացքի այս պայմաններուն մէջ մեք ո՞րքան անլուսհեմ կը գտնուիմք խոտելովռուսական համակրանք։ Արտասահմանի մէջ հրատարակուող հայ ազատական թերթերն իրենք զիրենք ազատ կը համարին աւելի կամ նուազ յաճախ հակառուս կարծիքներ կամ դիտողութիւններ անելու, որով մեծապէս կը գայթակղեցուցեն այն տէրութիւն որ գոնէ ուրիշներուն չափ, եթէ ոչ աւելի, գոհողութիւն արած է քրիստոնեայ հասարակութեանց ազատութեան համար։

Պիտի առարկուի՞ թէ Ռուսիա անձնական շարժառիթներով գործած է ինչպէս քրիստոնէից։— և ո՞ր տէրութիւն անխառն անձնուիրութեամբ գործած է, կ'աղաչեմ։

Ռուսիա այսօր աշխարհիս առաջնակարգ տէրութեանց մին է իբրեւ հզօր, և մեզ համար քան զամենայն հզօրագոյնն ու ազդեցիկն է այնու զի մեզ սահմանակից է և Թուրքիոյ ահաւորագոյն թշնամին։

Մեք պարտաւոր եմք վարուիլ Ռուսիոյ հետ իբրեւ քրիստոնէից պաշտպան հզօրագոյն տէրութեան հետ։ Չենք կարող զանց անել այդ տէրութեան համակրանքն· այն հարկաւոր է մեզ։

Պէտք է ջանալ ջեռուցանել Ռուսիոյ համակրութիւնն առ մեզ, պէտք է նաև պահպանել և ջեռուցանել Անգլիոյ համակրութիւնն, և զՖռանսեացւոցն, և զբոլոր մեծ պետութեանցն։

Եւ ահա հոս է Հայոցս Արտաքին Քաղաքականութեան փափկութիւնն։ Դերագանց իմաստութեան պէտք կայ նախանձընդդէմ տէրութեանց համակրանքն հայ դատին վերայ կեդրոնացնել կարենալու համար։

Մեծ պետութեանց իւրաքանչիւրին սիրտն շահելու համար հերիք չէ անոնց իւրաքանչիւրին ուշադրութիւնն երբեմն երբեմն հրաւիրել Հայաստանի վիճակին վերայ· նոցա արտաքին գործոց պաշտօնատանց անխափ ուղղել հարստահարութեանց տեղեկագիր կամ այլ թուղթ՝արդարեւ ուղիղ է, քանի որ ամենն ալ ստորագրած են ծանօթ 61դ յօդուածն։ Սակայն այդ լոկ քաղաքավարութիւն կրնայ համարուիլ, ի յարդալիր հաշիւ առնուլ մի։ Այդ ինքնին բաւական չէ համակրանք զարթուցանելու։ Համակրանքն ի համակրանաց կը ծնի։ Բոլորովին ազդայական կը լինի այս ինչ մեծ պետութիւնն բռնաւոր և շահախնդիր հռչակել թերթի մէջ և միանգամայն նորա համակրալիր ուշադրութիւնն հայցել թղթակցու-

թեամբ։

Ըստ իս նախանձընդդէմ լրութեանց համակրանքն չահելու համար հետեւեալ ընթացքն է իմաստուն և գործնական.—

Նախ, Մեր այն գործիչք որք ի Լոնտոն հաստատուած են, պարտին քաղաքավարական ցոյցերն դէպ անգլիացի պաշտօնակալս այնպիսի կերպիւ չանել որ Ռուսիա վիրաւորի։ Կարելի է զԱնգլիա գովել առանց զՌուսիա դատելու։ Կարելի է մինչ իսկ երկուքն ալ գովել, վասն զի երկուքն ալ ունին գովելի կողմեր։

Երկրորդ, մեր լոնտոնեան գործիչք իրենց այժ տան մանաւանդ անգլիական ժողովուրդն չահագրգռելու, ի համակրութիւն չարժելու դէպ ի Հայս քան թէ կառավարութեան պաշտօնեաներն։ Փոխանակ մեք աղերսագիր կամ տեղեկագիր յղելու անգլիական կառավարութեան, այնպէս անենք որ նոյն ինքն անգլիական ժողովուրդն զիւր ներկայացուցիչներ ի գործ ստիպէ յօդուտ Հայոց։ Ազատ երկրի կառավարութիւն մի կրնայ դաշնագրական յանձնառութիւններն մոռնալ բայց չկրնար իւր ժողովրդեան ձայնին ու կարծեաց պատկառանք ունկն չդնել։ Ուրեմն պէտք է ջանալ ո՛չ կառավարութիւնն այլ յաւէտ անգլիական ժողովուրդն չարժել ճառախօսութեամբք, յօդուածովք, հրատարակութեամբք, և ժողովուրդն դիւրաւ պիտի կրնայ չարժել զիւր կառավարիչն։

Երրորդ, պէտք է ւր ռուսատէր կուսակցութիւն մի կազմակերպուի— զի վստահ եմ թէ ռուսատէր Հայեր շատ կան— որ անկեղծօրէն աշխատի, լոնտոնեան հայրենասէրներէն անկախաբար, Ռուսիոյ սիրն չահիլ Հայոց Խնդրոյն։ Այդպիսի կուսակցութիւն կրնայ կգմուիլ արտասահմանի մէջ, ի Բարիզ, օրինակի համար։ Ամերիկայի Հայերն ալ կրնան ընդհանուր ժողովի մէջ որոշելով աղերսագիր յղել Զարին և Նորին Վեհափառութեան գթութիւնն հայցել Հայաստանի համար։

Ես վստահ եմ թէ այդպիսի միջոցներ պիտի կրնան շատ նպաստել մեր դատին՝ Ռուսին համակրանք և Թրքին երկիւղ ներշնչելով, միանգամայն մղում տալով Անգլիացւոյն։

ԽՈՌ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՆՉԷՍԹԸՐ ԿԱՐՏԻՑԸՆ ԹԵՐԹՆ ՀԱՅՈՑ ԽՆԴՐՈՑՆ ՄԱՍԻՆ

Ուշագրաւ և ուժգին խմբագրական մի հրատարակած է Յունիս 20ի թուոմն, որմէ կը թարգմանեմք հետեւեալ կտորներն։

«Կ. Պոլսէն հասնող վերջին լրոց համաձայն՝ Թուրք պաշտօնեայք աննուազեալ եւ անողոք եռանդով կը շարունակեն տագնապեցունել հայկական գաւառաց քրիստոնեաներն։ Երկու ամիս առաջ իմացուեցաւ և ոչ ոք ժխտել կրցաւ թէ 2,000 Հայեր Թրքական բանտից մէջ նետուած էին։ 14 հոգի մահուան դատապարտուած են։ Տէր Թումայեան ուսուցչապետն կերեւի թէ ժամանակ առաջ քարոզ մի տուած և ցուցած է ագդու եղանակաւ թէ գործելու հասարակաց (ազգային) հիմ մի կայ որոյ վերայ կարող են բոլոր քաղաքական և լուսաւորչական հայեր միանալ։ Որքան ալ անհաւատալի թուի, կ'ասեն թէ այս քարոզ իբրեւ Թրքերէն պաղելու յորդոր մեկնուած է, և իւր մահուան դատապարտութեան պատճառ եղած է։ Թէև չեմք կրնար այս մանրամասնութեանց ճշդութիւնն հաւաստել, գիտեմք սակայն թէ Թրքային հալածանաց նախորդ երկար ցանկին շատ յարմարութեամբ կը կցի։

«... 15 տարի առաջ մեք այս Հայոց ապահովութեան պայմաններուն վերայ իշխելու պարտքն ստանձնեցինք։ Ռուսիա, յաղթահարած լինելով զԹուրքն յԵւրոպա, նմա ստորագրել տուաւ Սան-Սթէֆանոյի դաշնագրոյն մէկ յօդուածն, որով կը պարտաւորէր զնա անյապաղ ի գործ դնել հայկական գաւառաց մէջ վարչային բարենորոգումներ։ Փոյթ չէ թէ ինչ էին ռուսիոյ չարժառիթք, այս բաւական հաստատուն երաշխաւորութիւն մէր Հայոց համար։ Ի հաճոյս Անգլիոյ ներկայացուցչաց, նոյն յօդուածն Պէրլինի դաշնագրոյն 61րդ յօդուածին փոխուեցաւ յետոյ, և այս յօդուած բոլորովին անգործադրեալ մնացած լինելով Թրքաց կողմանէ, ստորագրող մեծ Պետութիւնք Հայերն խաբած եղան ճիշդ որպէս խաբեբայ հոգաբարձուներ։ Իսկ Անգլիա կրկին

և աւելի որոշ պատասխանատուութիւններ յանձն առաւ Կիպրոսի դաշնագրով, յորում Սուլթանն խոստացաւ Անգլիոյ «մուծանել հարկաւոր բարենորոգումներն որոյ վերայ յեռոյ երկու տէրութիւնք պիտի համաձայնին։» Այս կարգադրութեամբ գրկեցինք Հայերն, որքան որ կրնայինք, ռուսական ազդեցութեան և զօրութեան միջոցաւ հանգիստ գտնելու յոյսէն։ Ռուսիա միշտ կատարելապէս պատրաստ գտնուած է իբրեւ Հայոց պաշտպան գործելու։ Անգլիոյ արտաքին քաղաքականութեան վարիչք 1878ին վարկան թէ Ռուսիոյ այդպէս անելն Անգլիոյ շահուց հակառակ է. և ուստի Հայկական և ուրիշ ասիական Թուրքիոյ գաւառաց ամրողջութիւնն երաշխաւորելու դժպհի պատասխանատուութիւնն ընդունեցին։ Ահա Տէր Թումայեան ուսուցչապետի դատին ու դատապարտութեան օրինակն կը ցուցնէ թէ մեր պաշտպանեալն որպիսի եղանակներ կը գործածէ իւր սահմանաց մէջ արդարութիւնն ի գործ դնելու։ Պաշտպանել այդ գաւառաց ամբողջութիւնն առանց մի և նոյն ատեն պնդելու որ վարչական լիուլի և արագ բարեկարգութիւններ ի գործ դրուին՝ պիտի լինէր ազգային շնական անձնասիրութեան անամօթ, անհրապարակելի գործ։

«... Սակայն մինչև այսօր մեք մեր պատիւ պաշտպանած չեմք վասն զի ոչ մէկ բանի վերայ պնդած ունիմք։ 1880էն 1882 մի քանի փսրձեր արաւ լորտ Տըֆըրին Դրան ի գործ դնել տալու բարենորոգումներն, բայց ոչ ինչ արդիւնք յառաջ եկաւ։ Բաւական յարատեւ և բաւական խիստ չգտնուեցանք։ Ամենափոքր դժուարութիւն մ'ոնգամ չկար կարօտեալ բարեկարգութիւններն ճշդելու մէջ։ Ցառաջ քան Պէրլինի վեհաժողովոյն գումարումն ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ, մեծ ընդունակութեան տէր հայ քաղաքագէտ, վերակազմութեան ծրագիր մի յօրինեց որ երբէք չցուցուեցաւ թէ անգործնական կամ մինչև իսկ դժուար գործադրելի եղած լինի։ Նա առաջարկեց որ Հայաստանի կառավարիչն միշտ ի ծնէ հայ լինի, և իւր պաշտօնավարութեան շրջանն 6 կամ 7տարի տեւէ. որ նահանգին ներքին պաշտօնավարութեան համար կառավարիչն կէսգինուորական ոստիկանութիւն մի կազմակերպէ. որ դատական և գործադրական պաշտօնէութիւնք, այժմ եղծեալ և չփոթեալ ի ձեռս Թուրք պաշտօնէից, բոլորովին որոշ լինին իրարմէ, և դատական նոր դրութիւն մի յօրինուի։ Ասոնք էին, ելմտական ինչ ինչ բարեկարգութեան թելադրութեամբք հանդերձ, Նուպար փաշայի առաջարկք։ Թուրքիա ինքնակամ բնաւ երբէք չպիտի ձեռնարկէ այս կամ այսպիսի բարեկարգութիւններ ի գործ դնելու։ Այս երկրին ազատական կառավարութեան անկ է առաջին քայլն առնուլ։ Թուրք կառավարութիւնն բոլորովին անզօր, ապականած, անխիղճ է, և մինչև անգամ խելօք անձնասիրութեան անընդունակ կը թտնուի, բայց լոկ երկիւղի ճնշման տակ կրնայ իւր թոյլ սրրունքներուն հնազանդիլ տալ իւր գլխոյ հրամանաց, և երկիւղի այս գործիքն, որոյ կիրառութիւնն միաձայնութեամբ կը յանձնարարէին ազատականք երբ պաշտօն չունէին, պէտք է հաստատօրէն ի գործ ածեն այժմ երբ յիշխանութեան են։»

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼՔ

Բրիտանական խորհրդարանին մէջ Յունիս 22ին Նորէն խօսուեցաւ Էնկիւրիի դատարանին ձեռամբ մահուան դատապարտեալ Հայոց վերայ։ Մր. Սթիվընսըն Արտաքին Գործոց Քարտուղարին հարցաւ թէ կարո՞ղ էր Էնկիւրիի դատարանին վերաբերեալ հեռագրական տեղեկութեանց բովանդակութիւնն հաղորդել խորհրդարանին։ Մր. Լապուշէռ ալ հարցում արաւ թէ վճիռն վերաքննիչ ատենի առջև պիտի չելնէ՞ր յառաջ քան զգործադրութիւնն, և թէ այն պատճառաւ քանի մի շաբաթ ժամանակ պիտի չանցնէ՞ր։ Սըր Կրէյ պատասխանեց թէ «Լիուլի տեղեկագիր դեռ հասած չլինելով Արտաքին Գործոց պաշտօնարանն, անկարելի է առ այժմ հրապարակային որոշ տեղեկութիւն տալ։ Սակայն հետեւեալ մանրամասնութիւնք իմացուած էին արդէն, այսինքն թէ դատաստանն սկսեր է Մայիս 20ին, Դատարանն կազմեալ լինելով նախագահէն, երկու ուրիշ Թրքերէ, մէկ կաթոլիկ

Հայէ և մէկ Յոյնէ: Բանտարկելոց համար կային եօթն փաստաբանք: Դատավարութիւնն կատարուեր է հրապարակաւ, և բանտարկելոց իւրաքանչիւրն զատ զատ հարցաքննուեր է ի ներկայութեան միւսներուն, ի բաց առեալ զՏէր Թումայեան, զոր հարցաքննելու պահուն Տէր Գայեան դուրս հանուեր է: Կրնամ ասել թէ մեր տեղեկութեանց համեմատ կը յուսայինք թէ Ամերիկեան գոլէճին վերաբերեալ բանտարկեալք պիտի ազատ թողուէին դատարանէն, սակայն այնպէս չէ եղեր, և մտահոգութեամբ կը սպասեմք տեղեկանալու թէ ինչ ապացուցի վերայ հիմնած են այս վճիռներն:»

Խորհրդարանին մէջ միայն ազատականք չեն մեր դատապարտելոց համակրողք, այլ և Իռլանտացի ինքնավարականք, Արմատականք և Թորիք: Ըստ Լրոյ Տէյլի Նիւզի, Խորհրդարանի բոլոր կուսակցութեանց վերաբերեալ բազում անդամք խնդրագիր մի ստորագրած են ուղղեալ առ Սուլթանն, որոյ գթութիւնն կը հայցեն բանտարկելոց համար: Այսպիսի խնդրագիր յոյժ հազուադէպ բան է: Կ'երեւի թէ Անգլիացիք կը զգան թէ իրենք զԹուրքիա կործանմանէ փրկած լինելով՝ Դրան վայրագ անարդարութեանց պատասխանատուութիւնն իրենց վերայ կը ծայրանայ:

«Տէյլի Նիւզն» հետեւեալ խորհրդածութիւններն կ'ընէ այդ առթիւ.— «Կատարելապէս բանաւոր է որ Կայսերական խորհրդարանի անդամք դիմէին Սուլթանին և զգուշացնէին զնա այնպիսի քաղաքականութեան մի հաւանելէ որ բովանդակ քաղաքակիրթ աշխարհն յանհնարին զայրոյթ պիտի շարժէր: Ինչպէս արդէն ըսած եմք, քաղաքական յանցանք կոչուած այս գործերն բնաւ վերաբերութիւն չունին քաղաքական գործոց: Արդարութեան և գալու դատաստանին վերայ տրուած քարոզներ կը թուին լինիլ այն քաղաքական ոճիրներու մի քանին որոց համար մահուան վճիռ արձակուած է: Ի մահ դատապարտեալ երկու միսիոնարք ամերիկեան քաղաքացի չեն դժբաղդաբար, սակայն իրաւունք ունիմք Միացեալ Նահանգաց կառավարութեան թոյլ ընթացքին դէմ բողոքելու: Ի քաղաքիս եղած երէկուան ժողովոյն մէջ Տր. Տարպի ցուցուց թէ ամերիկեան կառավարութիւնն դէշ և միանգամայն անբաւական տեղեկութիւն ստացած էր: Մեք ալ ուղղակի Ազգային Թեւարկութեան իրաւունք չունիմք, բայց որովհետև պաշտպանած եմք զԹուրքիա ընդդէմ այլոց, այժմ ալ մեր ընթացքն արդարացունել պարտաւոր եմք պաշտպանելով զնա ինքն իրեն դէմ: Պէտք է որ Միացեալ Նահանգաց բարոյական նեցուկն ունենայինք, և կը յուսամք թէ պիտի ունենամք, ինչպէս արդարև զբոլոր քաղաքակիրթ աշխարհին: Հազիւ ըմբռնելի է որ Թուրք կառավարութիւնն ի հեճուկս հանրային կարծեաց այսպիսի կեդրոնացման մի կարենայ թոյլ տալ որ այնպիսի խայտառակ գործ մի գործուի:»

ԹԱՆ

ԵՒ

ՀԱՅ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼՔ

Ֆռանսական ԹԱՆ թերթն ևս խմբագրականի մի նիւթ արած է վերջին դէպքերն և իրեն սովորական դարձած ցած և կեղծ Թրքասիրութիւնն նորէն ցուցած է:

Դատապարտելոց մէջ Ամերիկեան գոլէճի հայ ուսուցչապետներ գտնուելով՝ կը յուսացուէր, կ'ըսէ, թէ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն պատշաճ պիտի համարէր միջամտել, բայց չմիջամտեց, ուստի և «Կ. Պոլսոյ անգլիական դեսպանին հարկ եղաւ գործոյն երերն խյնալ չիցէ՛ թէ կորուսանէ հայ յաճախորդներն որոց բաւական արժէք կ'ընծայէ:» Այս անպատշաճ մեկնութիւնն տալէ յետոյ կը շարունակէ Թան. «Յոյժ մարդասէր բայց և միանգամայն սակաւիկ մի խռովասէր ոմանք կը պնդեն թէ Սուլթանն պարտէր ներման իրաւունքն գործածել յառաջագոյն իսկ քան յորոշումն գալն վերաքննիչ ատենին որում յանձն է վճռոյն վաւերականութիւնն քննել...Դատապարտելոց լաւագոյն բարեկամներէն ոմանք— և եւրոպեան երկրաց մէջ ունին բարեկամներ դատապարտելոց մի քանին որք իրենց ուսումն առած են յԵւրոպա, բարեկամներ մինչև անգամ անոնց մէջէն

որք սաստիկ դէմ են հայկական յեղափոխութեան իբրեւ սպառնալեաց օսմանեան կայսրութեան ամբողջութեանն— կը ցաւին յուզեալ մարդասիրաց այս ձախող միջամտութեան վերայ։ Դժուար թէ Սուլթանն չթողու որ քննութիւնն իւր կանոնաւոր ընթացք աւարտէ, թէև ի մտի դրած իսկ լինի ներում շնորհել, և ուստի վերջնագրի պէս ներկայացումներ անելով և ժամանակ սահմանելով գուցէ աւելի դժուարացուցած կը լինին գթալիր հրովարտակի մի շնորհումն։»

Աւա՜ղ որ Թան այդքան անգիտութիւն կը կեղծէ թրքական արդարութեան անկանոն և քմահաճ ընթացքին նկատմամբ, որ երբեմն դատերն անզբաւ երկարութեան կը մատնէ և սակայն կրնայ նաև անակնկալ և ահաւոր արագութեամբ քննութեանց և կենաց վախճան տալ։ Անգլիական կառավարութիւնն իրաւունք ունէր փութով ներումն պահանջելու, և պէտք ալ չունէր վերաքննիչ ատեանին որոշման սպասելու, զի թրքական ատեաններու որոշմանց արժէք չընծայելու դասն առած է ըստ բաւականին, և գիտէր ալ թէ ներկայ դէպքին մէջ դատն ապօրէն եղանակաւ տեսնուած էր։ Թանի խօսքերն գրգռիչ չողոքորթութիւն կը պարունակեն առ Սուլթանն, և մեծ արատ են այդ մեծ թերթին։

Թան կը ջանայ ցուցնել նաև թէ անգլիացի հայասիրաց այդեցութիւնն շատ արդիւնաւոր չէ եղած, և հայ գործիչներն ալ կը ծաղրէ իբրեւ անօգուտ և պարծենկոտ ձանձրացուցիչներ։— «Ցայտնի է թէ, կ'ըսէ, Տէր Կլատսթընի և Տէր Պրայսի նման մարդոց առ հայ հայրենասէրս բարեկամութիւնն, շատ զգուշաւոր սակայն և լաւ ու իմաստուն խրատներով առատ բարեկամութիւնն, միշտ իրենց դատին չէ ծառայած Ապտիւլ Համիտի քով։ Եթէ Պէրլինի Դաշնագրոյն 61դ յօդուածն ցարդ մեռեալ տառ մնացած է, մեղքն ոչ Սուլթանին ճիտն է և ոչ Նորա խորհրդականաց, այլ մանաւանդ աղմկալից գործունէութիւն ցոյց տալով կառքի ձիերն զառ ի վեր քշելու յաւակնող մի քանի ճանճերու, և ևս հայ ժողովրդեան մի քանի մասերուն որք շատ դիւրահասկանալի բայց և այնպէս յոյժ ցաւալի անհամբերութիւն ցոյց տուած են։

«Այսօր խնդիրն քաղաքականութեան վերայ չէ, այլ 17 դատապարտելոց կենաց վերայ, և յուսալի է թէ փափկասրտութեան սխալներ աւելի ևս չպիտի դժուարացուցանեն զգործադրութիւն ողորմած կամացն որ աներկբայ Սուլթան Ապտիւլ Համիտի կամքն է։ Եւրոպա չպիտի ներէ այն մարդոց— արուեստիւ յեղափոխական կամ մարդասէր մարդոց— որք այս թշուառներու չահն զոհել ուզէին այս ողբերգական պարագաներէ օգուտ քաղելու բաղձանաց՝ ի նպաստ իրենց անձնականութեան կամ նոյն իսկ իրենց դատին։»

Մարդ կ'ամաչէ այդպիսի գծուծ խորհրդածութիւններ տեսնելու Փռանսական ազգին մեծագոյն քաղաքական թերթերէն միոյն մէջ։ Սուլթանն ողորմա՞ծ է եղեր։ ... Եւրոպա պիտի բարկանա՞յ եղեր այն մարդասէրներու որք Սուլթանի վերայ ճնշում ի գործ դնել փորձելով կրնան զնա զայրացունել և ողորմած դիտաւորութեան գործադրմանն արգելք լինիլ...։

Եւ այժմ արդեօք կամաչէ՞ Թանբերան «Թան»՝ տեսնելով թէ Անգլիոյ ճնշումն անմիջական արդիւնք ունեցաւ ողորմած Սուլթանի վերայ, և Տեարք Թումաեան ու Գայաեան ազատ արձակուեցան՝ Թուրք անիծեալ հողէն հեռանալու պայմանաւ։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ

ՄՊՕՐԻՆԻ ԳՈՐԾԵՐ

Լին, 11 Յուլիս 1893

Տէր,

Թոյլ տուէք որ իմ և շատերու սրտին կսկիծ պատճառող և կարեւոր խնդրոյ մի վերայ ուշադրութիւն հրաւիրեմ ձեր պատուական թերթի միջոցաւ։ Ցայտնի է թէ այս երկրին մէջ գործաւորական Միութիւններ կան, որք իրենց շահերն գործատերաց դէմ պաշտպանելու ուրիշ միջոց չունին բայց եթէ գործադուլ անել և այսպէսով նպաստաւոր զիջումներ ձեռք բերել, և երբեմն կը յաջողին յայսմ, երբեմն ոչ։ Միութեան ամեն անդամ պարտաւոր կը ճանաչէ ինքզինք, իբրեւ մի և նոյն մարմնոյ անդամն, չգործել ցորչափ գործադուլն շարունակէ։ Եթէ անդամ մի

հակառակ այս հասկացողութեան, երթայ գործէ ի գործարանին, յետին կարգի վատ, անհաւատարիմ և անպատիւ ոք կը հրաչակուի, և նախատանօք կ'արտաքսուի Միութեան ծոցէն։

Մեր հայ գործաւորներն, կ'ամաչեմ ասել, յաճախ այս միութեանց գործադուլի յաջողութեան արգելք եղած են կամ լինիլ փորձած են՝ լքուած գործարանին մէջ գործելու վազելով։ Յաճախ այդ գործ վաղանցիկ եղեր է և յոյժ քիչ շահաբեր Հայ միջամուխին, բայց կարի անպատուաբեր Հայ անուան։ Այս բանս գլխաւորաբար Մասաչուսէց նահանգին մէջ յաճախադէպ է։ բազում ամերիկացի ընտանիքներու հացին արգելք եղած են մեր հայրենակիցք։ Թերթերու մէջ ամեն անգամ հրատարակուած է այս գործ յափշտակող Հայերու ընթացքն իբրև անպատիւ, չդէտ և չտես վայրենիներու։ Դիւրին է գուշակել թէ այս խայտառակ ընթացքին հետեւողներն թէև փոքրամասնութիւն լինի, բովանդակ հայ գաղութներու և հայ ազգին նկատմամբ հակակրանք, ատելութիւն և զզուանք կը յարուցանէ Ամերիկայի մէջ։

Վերջերս գործադուլ մի պատահեր է Նիւ Հէմփշիր նահանգին Ռոչէսթըր գիւղին մէջ ուր միակ գործարանն է կօշկի գործարան մի, բոլոր բնակչաց ապրուստի աղբիւրն գրեթէ։ Մինչ խեղճ տեղացիք կը ճգնէին իւրեանց դատին համար և կը սպասէին համբերատար, խումբ մի Հայեր քանի մի պարոններու առաջնորդութեամբ փորձեցին բացուած տեղն գրաւել և հաղարաւորներու գործն ուրել։ Բարեբաղդաբար Միութեան անդամակից երկու Հայեր հոն հասան խնդրէն անտեղակ՝ և ջանացին բոլոր ուժով օգնել Միութեան՝ համոզելով իւրեանց հայրենակիցներն ետ քաշուիլ այնպիսի ապօրէն ընթացքէ։ Եւ արդարեւ զմեծամասնութիւնն տարհամոզելու յաջողեցան, իսկ մի քանիներ քարացեալ սրտիւ յամառեցան մնային։ Միութեան անդամք մեծ համակրանօք պատուեր են իրենց երկու եղբայրակից Հայերն, իսկ այն մի քանիներ որք գործարանին մէջ ապրիլ կը մըտադրէին՝ ծեծելով վռնտելու յաջողեր են։

Պէտք է նաև յաւելում թէ Հայերն այս անպատիւ ընթացքին մղողներն մի քանի անխիղճ և չահախնդիր գործիչներ են որք զմեր անգէտ և անհեռատես եղբարքն վատութեան և անվեհանձնութեան խմորով կը խմորեն։

Խոնարհաբար յորդոր կը կարդամ որ Հայ ընկերութեանց ժողովներու մէջ բանիմացք խօսին այս խնդրոյն վերայ և մեր անմշակ հայրենակցաց միտքն լուսաւորեն՝ ցուցնելով թէ այնպիսի վատ կերպիւ գործ հայթայթելու մէջ նիւթական շահ չկայ և բոլոր Հայերու ներկայ և ապագայ յաջողութեան վտանգ և նախատինք կը սպառնայ։

* * *

Քաղաքական Ազգային

ԵՒ

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

Տէր Ն. Ֆրէզնոյէն կը գրէ Յունիս 28 թուով.—

Երջանկայիշատակ Ներսիսի, Ջերազի և մանաւանդ ձեր Ազգային «Քաղաքականութիւն» խորագրով յօդուածներն մեծ հետաքրքրութեամբ և հաճոյքով կարդացուեցաւ ու տակաւին կը կարդամք, շատերու հետ և ես համաձիր եմ ձեր սկզբանց, բայց պարտիմ ըսել թէ իմ գաղափարս այն է թէ մեր այժն պէտք է կեդրոնացնեմք բուն իսկ Հայաստանի մէջ և այժ ըսելով ես միայն պէնքի այժն չեմ հասկնար այլ այն միջոցներն զորս ժողովուրդ մը կատարելապէս զարգացնելու կը ծառայեն.— Ջանալ դպրոցներ բանալ Հայաստանի ամեն մէկ անկիւնն, գիւղացի ժողովրդեան նիւթական միջոցներն ապահովել երկրագործական նորանոր գործիքներու վարժեցնելով և տաժանելի աշխատութիւնն թեթեւցուցնելով. ի մի բան, մտքի կրթութեան հետ նիւթական զարգացմանն հոգ տանիլ։

* * *

Էնկիւրիի բանտարկելոց երեքն խոստովանած էին, կը գրեն Տէյլի Նիւզի, թէ Տեարք Թումայեան և Գայայեան անդամ

էին յեղափոխական յանձնախմբին, սակայն դատարանին մէջ երդուելով յայտարարեցին թէ տանջանաց տակ բռնի կորզած էին իրենցմէ այդ զրպարտութիւն։ Ասոր վերայ ընդ. դատախազն պահանջեց որ երեքն ալ պատժուին իբրեւ ստերդուին, սակայն դատարանն որոշեց թէ պատժական օրինաց տրամադրութեան համեմատ՝ նախնական քննութեան պահուն ստացուած խոստովանութիւն մի վաւերական չի ճանչուիր մինչև որ երդմամբ չհաստատուի ի դատարանի։ Երեքին մէկն պատասխանելով ընդ. դատախազի դորովանաց, ասաց «Եթէ դու ալ ուտէիր Խոսրէվ Փաշայի խարազանն, Աստուծոյ գոյութիւնն իսկ կուրանայիր։»

***

Յուլիս 4ին, ԹԱՅՄԶի Գահիրէի թղթակիցն կը հեռագրէ զրոյց մի թէ Խտիվն խնդրեր է Սուլթանէն յղել թուրք զօրք անգլիական զօրաց տեղն դրաւելու։ Խտիվն խնդրած կը լինի նաև որ Սուլթանն Լորտ Քրոմբրի, Անգլիոյ ներկայացուցչի յեգիպտոսէ ետ կանչուելուն ճարն գտնէ։

Խտիվն ի Պոլիս գնաց Սուլթանին ներկայանալու։ Կը կարծուի թէ հականգլիական միջոցներ ձեռք առնլու կը յորդորէ զվեհապետն։ Մինչև իսկ զրոյց կայ թէ Փաշան սպառնացեր է գահէն հրաժարիլ եթէ սուլթանն չհաւանի անգլիական գրաւման վերջ տալ աշխատելու։

***

Սուլթան Համիտ Անգլիոյ թագուհւոյն սրահի մի ամբողջ կահ կարասին նուէր արեր է՝ բնիկ թրքական գործ լինելով։

***

Գերմանական Քրուբ գործատան Ձմիլիոն 300հազար Ֆրանքի ռազմամթերք յանձնարարեր է թուրք կառավարութիւնը։

***

Վախճանեալ Հայոց Հայրենասիրական Միութեան անդամներուն ոմանց վերայ շատ տխուր և գրգռիչ տպաւորութիւն դործած է այն պարագայն որ ընդհանուր Տնօրէնն յանկարծ լուծեալ հրատարակած է Միութիւնն առանց անդամոց կամ տեղական օթեակներու կանխաւ հաղորդած լինելու իւր դիտաւորութիւն, կամ խորհուրդ հարցնելու։ Ընկերութիւն մի, կ'ասեն, իւր կամօք միայն կրնայ լուծուիլ և ոչ թէ տնօրէնին կամ նախագահին հրամանաւն։

***

Տէր Ծ. կը գրէ Ուստրրէ, գոհունակութիւն յայտնելով նախորդ թուոյ լեզուական յօդուածին մասին.—

Քարբերդ գաւառի մէջ, Հապուսի, Գոմք, Աղըձիկ և շրջակայ 10 գիւղերու մէջ կի կը հնչեն աշխարհաբարի բայբէկեր մասնիկն և կ'ասեն «կի տամ, կի լամ» ևն։ Նոյնպէս Մշոյ, Բաղէշոյ, Վանայ և Խնուսի գաւառաբարբառոց մէջ կի է, «կի գամ»ևն։

Աներկբայ կի ձայնն հայ է և կը օտարաշունչ։

***

Պոսթոնէն կը գրէ Տէր Ս. Յուլիս 10 թուով։

«Հայքի» վերջին թուոյ մէջ տրուած այն լուրն թէ Տիգրանակերտցի Պարոս Պճպճեան մեռեր է, սխալ է։ Ես անձամբ յիշեալն տեսնել գնացի հիւանդանոցն. միայն մէկ թեւն կտրուած է իրաց, միւսն ալ թեթեւապէս վնասուած։

ԲԺԻՇԿ ԿՈՆԻԿՈՎ

Պատիւ ունի յայտարարել Պոսթընի հայ հասարակութեան, որ ինքն բժշկական ուսումն աւարտած լինելով Զուիցերիոյ մէջ և ժամանակ մի Փարիզ բժշկուանելէն յետոյ եկած Ամերիկայ և Պոսթըն հաստատուած է, շատ հմուտ է վարակիչ ախտեր բժշկելու մէջ, ու իր պաշտօնատեղին կը գտնուի

361 Harrison Avenue

Office hours; 8—10 A. M. 1—3 & 5—7 P. M.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվլնիւ Նիւ Եորք

26դ. և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ա Գ Ո Ր Ծ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester. Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան

30 Eddy street 28 South Margin Street

Providence R. I. U. S. A. Boston Mass.

ԵՂԲԱՐՔ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու տուներու չահերն միևնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն։ Անոնք որ կը կարօտին ըստակ ղրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկիր, Չիմիշկէզէկ, Չունքուշ, ընդհանուր շրջականերումն, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու։

«ՀԱՅՔ»

Թղթակազմ

Ա. տարի 1տոլար 50 սէնթ կամ 7Ֆր. 50ս.

Բ. տարի 2տոլար կամ 10 Ֆրանք

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութրանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ Ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հան դերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հռչակաւոր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 Թալէր կամ 5 Ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, Նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 Ֆր.

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս Ֆրանք։

Ո՛ Հայեր,

որ կը բնակիք Ուստըրի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս։ Իմ անունս Լաշանս է, և խանութս կը գտնուի Ֆրոնթ սթրիթի 60 նիւմէրոն։ Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ։ Ո՛վ որ կ՚ուզէ չխաբուիլ և չունչը չհատցունել գին կտրելու համար, և ո՛վ որ չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կօշիկներն փորձէ։

T. LACHANCE, կօշկավաճառ

60 Front St. Worcester, Mass.

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ 1554 B. Way
46 և 47 փողոցներուն միջեւ

Constantinople Bazaarի (Քոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի Թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի) ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառականութեամբ, և անոնց և որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն: Թէ ապրանաց հարազատութեան և թէ գնե րու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն:

Նաև փոքր գումարով ոև է Թրքական ապրանք կը գնէ ու կը ղրկէ յանձնարարողաց այլ և այլ նահանգներ, և այսպէս ճամբու ծախքեր խնայել կուտայ մեր վաճառականաց:

PATENTS HOPKINS & ATKINS washington, D. C. 20 years' experience write for informatian

---

THE WORCESTER MECHANICS
SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով:

C. F. RANDALL
177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արգոյ հայ հասարակութեան թէ իմ վերոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և րը-պըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ հայ հաճախորդաց:

Ծանուցանելով և թէ բացարձակապէս և ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանօք

Ձերդ
Րանտըլ

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար
եկ
THE STAR CLOTHING Co.
Գին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է
385 Մէյն Փողոց, Ուուսթըր,
385 Main St. Worcester, Mass.

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մը, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ